

«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

ԱՌԱՐԿԱ՝ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Հ. 189 ԴՊՐՈՑ

ՄԱՍՆԱԿԻՑ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼՎԱՐԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	3
ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.....	4
Եզրակացություն	20
Օգտագործված գրականության ցանկ.....	21

ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքի արդիականությունը: Հայաստանյան հանրակրթական համակարգում առկա է անհավասարություն գյուղում և քաղաքում ապրող, ինչպես նաև սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների համար՝ կրթական հնարավորությունների հասանելիության առումով: Սովորողների կրթական ձեռքբերումների, ուսման մեջ առաջադիմության, ինչպես նաև հետագայում մասնագիտական կողմնորոշման ու բուհ ընդունվելու հարցում էական դերակատարում ունեն՝ սովորողների ընտանիքների սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողների կրթվածության մակարդակն, ընտանիքի բնակության վայրի աշխարհագրական տեղակայումը: Ուստի կարևոր է, որպեսզի պետական քաղաքականությունը՝ հանրակրթության ոլորտում, առանձնահատուկ ուշադրություն դարձնի և մեխանիզմներ ստեղծի այս խմբերի երեխաների լիարժեք ներառումը որակյալ հանրակրթության մեջ ապահովելու համար:

Աշխատանքի նպատակը՝ պարզաբանել սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը կենսաբանության դասավանդման ընթացքում:

Աշխատանքի խնդիրները.

1. վերլուծել սովորողների իրավունքների և ազատությունների առանձնահատկությունները,
2. ուսումնասիրել հիմնական պահանջները կենսաբանության դասավանդման ընթացքում,
3. բացահայտել պատվի և արժանապատվության պաշտպանության առանձնահատկությունները:

Աշխատանքի կառուցվածքը՝ աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, հիմնական գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Կրթությունն հասկացության կառուցման, բնորոշման հարցը գտնվում է մանկավարժության՝ որպես գիտության հետազոտման առարկայի տիրույթում: Մանկավարժության մեջ «կրթություն» հասկացության բնորոշումը բանավեճային է: Սակայն, ի տարբերություն գիտության հասկացության, կրթության հասկացությունը չունի բազմիմաստություն: Բանավեճը հիմնականում տեղի է ունենում կրթության հասկացության բնորոշման մեջ ներառվող հատկանիշների շուրջ: Մանկավարժության մեթոդաբանական մոտեցումներից մեկը հենվելով բնորոշումների տեսության վրա՝ համակարգային-գործառութային վերլուծության միջոցով սահմանում է կրթության հետևյալ բնորոշումը. կրթությունը սոցիալապես նշանակություն ունեցող փորձը նախորդ սերունդներից հաջորդող սերունդներին փոխանցման հանրորեն կազմակերպվող ու կարգավորվող, ինչպես նաև անհատի կայացման կենսաբանասոցիալական մշտական գործընթաց է: Այդ գործընթացի արդյունքն անհատի ձևավորումն է կամ նրա կրթվածությունը: Կրթական գործընթացին բնութագրական են բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, ինչպես նաև կառուցվածքային երեք առումները՝ ճանաչողություն, դաստիարակություն, ֆիզիկական ու մտավոր զարգացում: Կրթության մեջ հնարավոր գործելակերպերն են ուսուցումը և ինքնակրթությունը²: Այս բնորոշումից ակնհայտ է, որ կրթության օբյեկտն անձն է, դրա արդյունքը՝ անհատի կրթվածությունը (գիտելիք, դաստիարակություն, զարգացում):

Մանկավարժության այսպիսի մեթոդաբանական մոտեցումներից ելնելով՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը կրթությունը բնորոշում է որպես անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն: Կրթության կարևորության

¹ **St'u** Леднев В.С., Содержание образования. М., 1989, 48-58:

² Նույն տեղում, 52-53 էջեր:

մասին կարելի է շատ խոսել, բայց դա երևի թե, չի մտնում սույն հետազոտության առարկայի շրջանակների մեջ: Ընդամենը կարելի է արձանագրել հետևյալ փաստը. կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է, իսկ կրթվելն անհատի զարգացման գործընթացն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների, ստեղծագործության տիրապետմանը, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Այսպիսով, «կրթություն» հասկացության բնորոշումից և դրա տարրերի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ «կրթություն» հասկացությունն իրավական կարգավորման տիրույթում ներառված է երկու իմաստով՝ կրթությունը որպես հասարակական համակարգ, հասարակական գործունեության տեսակ և կրթությունը որպես սուբյեկտիվ հավակնություն, իրավական կարգավորում ստացած սուբյեկտիվ իրավունք:

Դասավանդող սուբյեկտի ազատությունը ենթադրում է ուսումնական գործընթացի բովանդակության, մեթոդիկայի ինքնուրույն ընտրություն: Սակայն այդ ազատությունը նման չէ, օրինակ, դավանանքի ազատությանը, որովհետև դասավանդումն ընթանում է որոշակի կրթական կազմակերպությունում: Այդ կազմակերպությունը գործում է կրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասապարապմունքների, ընթացիկ ու ամփոփիչ ստուգումների շրջանակում: Հետևաբար, դասավանդողի ազատությունը հանգում է ուսումնական խնդրի կոնկրետացմանը, դրա մատուցման մեթոդին: Դասավանդման ազատությունը որոշակի ուսումնական կազմակերպության շրջանակում չի վերացնում սովորողի ազատությունը: Դասավանդումը «չպետք է սովորողներին հարկադրի ընկալելու որոշակի քաղաքական, աշխարհայացքային կամ գաղափարական արժեքներ կամ գիտական կարծիքներ: Սովորելու ազատությունը և դասավանդելու ազատությունն իրականացվում են սովորեցնողների և սովորողների, հետազոտողների և ուսանողների միջև նուրբ փոխհարաբերությունների ընթացքում: Գիտական տեսության հասցեատերերը ևս օգտվում են գիտական գործունեության ազատությամբ: Պարապմունքների և քննությունների ժամանակացույցների, ինչպես նաև ուսումնական պլանների շրջանակներում սովորողները կարող են ազատ ընդունել որոշումներ իրենց ուսման վերաբերյալ, մասնավորապես՝ նաև իրենց

գիտական աշխատանքի ընթացքում: Սահմանադրական իրավունքը նրանց ևս երաշխավորում է ուսման և հետազոտության շրջանակներում նոր գիտական իմացություն ձեռք բերելու հնարավորությունը, որը չպետք է ճնշվի սովորեցնողի հեղինակությամբ: Ընդհակառակը, գիտական ուսուցման խնդիրն է սովորեցնել քննադատական գիտական գնահատականների, ինքնուրույն մտածողության և աշխատանքի»³:

Այսպիսով, ակադեմիական ազատությունը ենթադրում է.

ա) բարձրագույն ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողի ազատությունն ուսումնական առարկան շարադրել իր հայեցողությամբ, ընտրել գիտական հետազոտությունների թեմաներ և իրականացնել դրանք իր մեթոդներով,

բ) ուսանողի ազատությունն ստանալ գիտելիքներ իր հակումներին ու պահանջներին համապատասխան:

Սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջները (գիտելիքներ, հմտություններ և կարողություններ) որոշ առարկաների պարագայում ընդհանրական են տրված՝ առանց դասարանային և թեմատիկ հստակ բաշխման: Չափորոշչային պահանջների թեմատիկ բաշխման բացակայության դեպքում դժվար է հստակեցնել, թե որ թեման է նպաստում մեկ կամ մի քանի չափորոշչային պահանջի ապահովմանը կամ բխում է այդ պահանջներից:

Առարկաների ուսումնական նպատակների կապակցվածությունը հանրակրթության պետական չափորոշչի պահանջների հետ հիմնականում տեսանելի է: Հանրակրթության բոլոր աստիճաններում առարկաների ուսումնական նպատակները հիմնականում տրված են սովորողակենտրոն մոտեցմամբ և ներկայացնում են այն ընդհանրական գիտելիքներն ու հմտությունները, որոնք սովորողը պետք է ձեռք բերի առարկայի ուսումնառության արդյունքում:

Ավագ դպրոցում գիտելիքային բաղադրիչի աճը տեսանելի է և հասնում է մինչև ընթացակարգային գիտելիք, մյուս կողմից, սակայն, կոգնիտիվ գործընթացի մակարդակը միջին դպրոցի համեմատ հաճախ նույնն է (օրինակ՝ «Կենսաբանություն» առարկայի պարագայում): Հանրակրթության բոլոր

³ Տե՛ս Կ. Զքշտայն, *Основние права и свободы. По российской Конституции и Европейской Конвенции*. М., 2004, էջեր 196-197:

աստիճաններում սովորողներին ներկայացվող պահանջներում առկա են հատկության և չափելիության խնդիրներ, որոնք հանգեցնում են տարընթերցումների և խոչընդոտում են կոգնիտիվ սահուն զարգացման ապահովումը:

Սովորողներին ներկայացվող պահանջները չեն զարգացնում սովորողների «բարձր մտածողության» գիտելիքներ, հմտություններ և կարողություններ: Առարկաների ուսումնական նպատակները հիմնականում անդրադառնում են համապատասխան Եվրոպական առանցքային կարողություններին, սակայն դրանք արդյունավետ կերպով մասնավորեցված չեն սովորողին ներկայացվող գիտելիքների, հմտությունների ու կարողությունների պահանջներում: Սովորողներին ներկայացվող պահանջներում, մասնավորապես բնագիտական առարկաների պարագայում, սակավ են կիրառության կարողությունները, սովորողի ինքնուրույն, հետազոտական աշխատանքի շեշտադրումները: Թերի են արտացոլված Համաշխարհային տնտեսական ֆորումի սահմանած՝ 2020 թվականի «բարձր մտածողության» խմբի հմտությունները՝ ուղղված անձի և հասարակության մրցունակությանը:

Ուսուցչի և սովորողի միջև փոխգործակցությունը ձևավորող է, երբ այն ազդում է սովորողի ճանաչողության վրա. ուսուցչի տրամադրած արտաքին խթանները և հետադարձ կապը սովորողի մեջ առաջացնում են ներքին արտադրություն:

Երեխայի իրավունքների պաշտպանությունը ներառում է Կոնվենցիայով ճանաչված բոլոր իրավունքների պաշտպանությունը, իսկ երեխայի պաշտպանությունն ասելով հասկանում ենք այն, որ՝ • երեխան, ծնողների ցանկությանը հակառակ, չպետք է բաժանվի նրանցից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները, գործող օրենքի և ընթացակարգի համաձայն, կայացնեն որոշում, որ այդպիսի բաժանումն անհրաժեշտ է երեխայի շահերը լավագույնս պաշտպանելու տեսանկյունից (հոդված 9, մաս 1). • երեխան պետք է պաշտպանված լինի ծնողների, օրինական խնամակալների կամ իր մասին հոգ տանող ցանկացած անձի կողմից ֆիզիկական կամ հոգեկան բռնության բոլոր ձևերից, վիրավորանքից կամ չարաշահումից, հոգատարության բացակայությունից կամ անուշադրությունից, կոպիտ վերաբերմունքից կամ շահագործումից՝ ներառյալ սեռական չարաշահումը (հոդված 19, մաս 1). • երեխան պետության կողմից տրամադրվող հատուկ

պաշտպանության և օգնության իրավունք ունի այն դեպքում, երբ ժամանակավորապես կամ մշտապես գրկվել է իր ընտանեկան շրջապատից կամ չի կարողանում մնալ այդ շրջապատում (հոդված 20, մաս 1). • երեխան պետք է որդեգրվի այն դեպքում, երբ պետությունն ապահովում է, որ երեխայի որդեգրումը թույլատրվի միայն իրավասու մարմինների կողմից, որոնք, կիրառվող օրենքի և ընթացակարգի համաձայն և գործին առնչվող ողջ հավաստի տեղեկատվության հիման վրա, կորոշեն որդեգրման թույլատրելիությունը (հոդված 21, մաս (ա)). • երեխան, որն ունի մտավոր կամ ֆիզիկական խեղումներ, պետք է ապրի լիարժեք և արժանավայել կյանքով այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են նրա արժանապատվությունը, նպաստում են ինքնավստահությանը և դյուրացնում են նրա ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքում (հոդված 23, մաս 1). • երեխան պետք է պաշտպանված լինի տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել կամ խոչընդոտել նրա կրթությունը կամ վնասել նրա առողջությունը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացումը (հոդված 32, մաս 1). • երեխան պետք է պաշտպանված լինի թմրանյութերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի օգտագործումից և այդպիսի նյութերի ապօրինի արտադրության ու առևտրի մեջ ներգրավված լինելուց (հոդված 33). • երեխան պետք է պաշտպանված լինի սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից, առևանգումից և վաճառքից: Պետությունը պարտավոր է երեխային պաշտպանել նրա բարեկեցությանը որևէ տեսանկյունից վնասող շահագործման բոլոր ձևերից (հոդված 34, 35). • երեխան պետք է պաշտպանված լինի զինված հակամարտություններից: Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նպաստելու դաժան վերաբերմունքի, շահագործման կամ չարաշահման ցանկացած ձևի, խոշտանգումների կամ ցանկացած այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, զինված ընդհարումների զոհ դարձած երեխայի ֆիզիկական կամ հոգեբանական վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը (հոդված 39:

Ծաղրանքն ու ստորացումները վաղուց են դարձել դպրոցական կյանքի անբաժանելի մաս և տարիների հետ այս երևույթն ավելի ու ավելի է տարածվում: Արևմուտքում այս երևույթն անվանում են բուլինգ: Շատ ծնողներ կարծում են, որ դա

այնքան էլ լուրջ խնդիր չէ, ինչպես, օրինակ, ծխելը, խմիչք օգտագործելը, սակայն բուլինգի հետևանքները ևս կարող են լինել շատ ծանր ու անշրջելի: Բուլինգը բացասաբար է անդրադառնում ոչ միայն դրան ենթարկված երեխաների, այլև՝ այն իրականացնողների վրա: Բուլինգի են ենթարկվում հիմնականում այն երեխաները, որոնք՝

- չունեն ծնողներ,
- ժամանակավորապես կամ մշտապես զրկված են ընտանեկան միջավայրից,
- ընտանիքում ենթարկվում են ֆիզիկական կամ հոգեկան բռնության, շրջապատված չեն հոգատարությամբ ու ուշադրությամբ,
- ենթարկվում են տնտեսական շահագործման,
- ունեն ցածր ինքնագնահատական և ազդեցիկ են,
- որևէ կերպ՝ արտաքնով, հասակով, ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, առանձնանում են ընդհանուրից,
- ֆիզիկապես կամ հուզական տեսանկյունից ավելի թույլ են,
- ինքնավստահ ու համարձակ չեն,
- կախվածություն ունեն ուրիշների կարծիքից:

Բուլինգ իրականացնողներ են համարվում այն երեխաները, որոնք սիրում են նեղացնել ու ստորացնել դասընկերներին, սովորաբար վատ են սովորում, գերակտիվ են, հակված են կոնֆլիկտների ու կոռիվների: Կան բուլինգի դրսևորման մի քանի եղանակ՝

- կիբերբուլինգ, որն իրականացվում է համակարգչի ու համացանցի միջոցով՝ օգտագործելով դրանք որպես վնասելու գործիք,
- ֆիզիկական բուլինգ՝ հրմշտոցի, հարվածների, ծեծի միջոցով,
- վերբալ կամ խոսքային բուլինգ՝ պիտակավորման և ծաղրի միջոցով,
- սոցիալական կամ հոգեբանական բուլինգ, որի դեպքում փորձում են մեկուսացնել երեխային իր շրջապատից և կանխամտածված կերպով բացառում նրան հասարակությունից:

Որպես կանոն՝ հանրակրթության համակարգի տեսլականի սահմանումն առավել ընդգրկուն է և ուղղված է երկրի կրթության ոլորտի զարգացմանը, հասարակության բարեկեցությանը, տնտեսության զարգացմանը և ազգային մրցունակությանը: Հանրակրթության համակարգի տեսլականի ձևակերպումները տարբեր երկրներում գրեթե համանման են (Isaacs et al., 2014), քանի որ դրանք մշակող մասնագետները հիմնականում առաջնորդվում են համաշխարհային պրակտիկայում կիրառվող մոտեցումներով: Իսկ ձևակերպումներում առկա տարբերությունները

պայմանավորված են տվյալ երկրի զարգացման պահանջների և նրա սահմանած նպատակների ու ձգտումների համապատասխանեցմամբ⁴

Ֆինլանդիա: Հանրակրթության ծրագրի հիմնական նպատակներն են՝ «մարդու իրավունքները, հավասարությունը, ժողովրդավարությունը, ազգերի բազմազանությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և մշակութային բազմազանությունը» (Ֆինլանդիայի հանրակրթության ազգային կրթակարգ): Հանրակրթությունը նպատակամիտված է զարգացելու անհատի իրավունքների և ազատությունների նկատմամբ պատասխանատվությունն ու հարգանքը: Դասավանդումը պետք է առաջ տանի գենդերային հավասարությունը, տարածաշրջանային հավասարությունը, կրոնի և քաղաքականության տեսանկյունից լինի չեզոք: Սովորողները պետք է կրթվեն՝ իմանալու իրենց իրավունքները և պատասխանատվությունները հասարակությունում, աշխատանքի մեջ և ընտանիքում: Ֆինլանդիայի կրթության առաքելությունը շեշտադրում է նաև սոցիալական նպատակներ՝ «կրթությունը գործիք է՝ զարգացնելու կրթական կապիտալը, հավասարությունը և համայնքային պատկանելության զգացումը»: Բացի անհատի աճի և ուսումնառության հնարավորություններից, հանրակրթությունը պետք է զարգացնի նաև ինքնագնահատականի առողջ զգացում: Ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները պիտի նպաստեն, որ սովորողները դառնան ժողովրդավարական հասարակությունում ակտիվ ներգրավված քաղաքացիներ, խթանեն շարունակական կրթության նրանց ցանկությունը (Ֆինլանդիայի կրթության ազգային խորհուրդ, 2004): Ճապոնիա: Ազգային մշակույթը մեծապես կարևորում է կրթությունն ու հմտությունները, ինչպես նաև խմբային և հասարակական հարաբերությունները: «Ճապոնիայում գոյություն ունի համընդհանուր համոզմունք, ըստ որի եթե անհատը նվիրված է աշխատում խմբի համար, խումբը դա գնահատում և փոխհատուցում է» (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ), 2011): «Կրթության հիմնական ակտով» (2006) ամրագրված է, որ կրթությունը, ուղղված լինելով անհատի զարգացմանը, պիտի նպաստի առողջ մտքով ու մարմնով քաղաքացիների դաստիարակմանը, որոնք կկարողանան ձևավորել խաղաղ և ժողովրդավարական պետություն ու

⁴ **Տե՛ս** Կրթության իրավունքի հասանելիության և հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության ոլորտում, Հետազոտության նախնական արդյունքներ Երևան, 2017:

հասարակություն: Շեշտադրվում են ճշմարտության ձգտումը և բարոյականության զգացումը, ինչպես նաև ստեղծարարությունը, ինքնուրույնությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հավասարությունը, փոխադարձ հարգանքը և համագործակցությունը: Ակնկալվում է, որ սովորողները պիտի գնահատեն աշխատանքը, գիտակցեն կարիերայի և առօրյա կենցաղի միջև կապերը և «հանրային ոգով» ակտիվորեն մասնակցեն հասարակության կառուցմանն ու զարգացմանը: Հարգանքն առ ավանդույթներն ու մշակույթը, հայրենիքի նկատմամբ սերը և աշխարհում խաղաղությանը նպաստելու ցանկությունը համալրում են կրթության նպատակները (Ճապոնիայի կրթության, մշակույթի, սպորտի, գիտության և տեխնոլոգիաների նախարարություն, 2006):

Մինգապուր: Հանրակրթության տեսլականն արտացոլում է մարդու արժեքը՝ որպես ազգային հարստություն, և համայնքին ու ազգին նրա նվիրվածությունը: Սովորողները պետք է կամենան «ջանալ ու ձգտել», հավատան մտածելու, նպատակներին և հաջողության հասնելու իրենց կարողություններին: Մինգապուրը շեշտադրում է քաղաքացիության, պատասխանատվությունն ընտանիքի, հասարակության և երկրի նկատմամբ (Մինգապուրի կրթության նախարարություն, 2014): Մինգապուրի «Մտածող դպրոցներ, սովորող ազգ» (Thinking Schools, Learning Nation, 1997) տեսլականն ուղղված է մտածող և նվիրված քաղաքացիներով հասարակության ձևավորմանը, որը կարող է դիմակայել ապագայի մարտահրավերներին՝ հիմնվելով 21-րդ դարի ժամանակակից կրթական համակարգի վրա: Դպրոցները պետք է խրախուսեն սովորողների և ուսուցիչների մասնակցությունը կրթական գործընթացին, առաջ մղեն ստեղծարարությունը և նորարարությունը՝ ամրապնդելով շարունակական կրթության մշակույթը: Բոլոր սովորողների առաջընթացը խրախուսվում է, սակայն այդ առաջընթացը կախված է նրանց կատարողականից և առաջադիմությունից, ինչպես նաև անհատական հնարավորություններից և հակումներից: Սովորողները պետք է արժևորեն և հարգեն ազնիվ աշխատանքը, յուրացնեն արժեքներ, դառնան ինքնուրույն և անհատապես մրցունակ՝ միևնույն ժամանակ լինելով թիմային աշխատող: Բնավորության հատկանիշների և քաղաքացիական կրթության միջոցով սահմանվում է ակնկալվող այն արդյունքների շրջանակը, որը պետք է ապահովեն առարկայական ծրագրերը:

Հատկապես առանցքային կարևորություն ունի ընդհանուր ինքնության գաղափարը և Մինգապուրի ազգային շահերը պաշտպանելու պատրաստակամությունը: Ընդհանուր առմամբ, թեև դիտարկված հանրակրթական համակարգերի տեսլականներն ունեն բազմաթիվ նմանություններ, սակայն որոշակի տարբերություններ կան: Ճապոնիայի և Մինգապուրի հանրակրթության համակարգերը, օրինակ, ունեն անհատի զարգացման բավարար նպատակներ, բայց այլ երկրների համեմատ կրթությունը, որպես շարժիչ ուժ, ավելի շատ նպատակաուղղված է դեպի տնտեսությունը: Նշված երկրների հանրակրթության համակարգերը նաև ունեն հստակ արտահայտված ազգային տարրեր: Ֆինլանդիայի հանրակրթության համակարգն ունի սովորողակենտրոնության ընդգծված բարձր մակարդակ, որն արտացոլում է մի շարք սոցիալական ձգտումներ՝ հիմնված հավասարության և արդարության սկզբունքների վրա: Անհատը դիտարկվում է որպես ժողովրդավարական հասարակության անկյունաքար: Հանրակրթության նպատակն է ուժեղացնել անհատ սովորողներին՝ զարգացնելով նրանց ներուժը և հակումները ողջ կյանքի ընթացքում, ինչպես նաև ապահովելով հավասար հասարակության զարգացման համար անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով անհատ: Դիտարկվող երկրների հանրակրթության համակարգերը, որոնք բարձր արդյունքներ են արձանագրել, ունեն հստակ ձևակերպված կրթական հիմնաչափեր երեք մակարդակով՝ համընդհանուր, կրթական և ուսուցման: Հաշվի առնելով կրթակարգում և առարկայական ծրագրերում հմտությունների ներառման առավել խնդրահարույց լինելը և Հայաստանի համատեքստում դրա առանձնահատուկ կարևորությունը՝ սույն հետազոտությունը կենտրոնացված է հատկապես լավագույն առաջադիմություն ցուցաբերած երկրների կրթակարգերում հմտություններին առնչվող բաղադրիչի վրա: Հմտությունների ներդրման լավագույն փորձ Ինչպես արդեն նշվել է «Կրթակարգի սահմանումներ և տեսական մոտեցումներ» բաժնում, հանրակրթության կրթակարգը «սոցիալական պայմանագիր» է ներկա և ապագա սերունդների միջև՝ ուղղված դեպի այն հասարակության ձևավորումը, որն այսօրվա սերունդը ցանկանում է տեսնել ապագայում: Այս գաղափարն առաջ է բերում 21-րդ դարի հմտությունների ձևավորման պահանջը, որն անհրաժեշտ է ապագայի հասարակությանը: Սա

ներկայումս համաշխարհային միտումներից է, որի շուրջ կան բազմաթիվ մոտեցումներ: Սույն հետազոտության շրջանակում ներկայացված են միայն առավել հայտնի և համատարած կիրառություն ունեցող երեք՝ ՏՀԶԿ 21-րդ դարի հմտությունների (OECD 21st Century Skills Framework), Համաշխարհային տնտեսական ֆորումի 2020 թվականի հմտությունների և Եվրոպական առանցքային կարողությունների (European Key Competencies) մոտեցումները: ՏՀԶԿ 21-րդ դարի հմտություններ ՏՀԶԿ 21-րդ դարի հմտությունների համախումբը սերտորեն փոխկապակցված է 20-րդ դարի վերջին սկսված և ցայսօր շարունակվող տնտեսական զարգացումների հետ: Ըստ այս մոտեցման՝ մշակող, արտադրական և այլ ցածր որակավորում պահանջող աշխատանքները դառնում են ավելի ու ավելի ավտոմատացված և մեքենայական՝ նվազեցնելով արհեստագործական հմտությունների պահանջարկը: Մյուս կողմից աճում է տեղեկատվության մշակման և այլ բարձր կարգի իմացական կարողությունների ու միջանձնային հարաբերությունների հմտությունների պահանջարկը: 21-րդ դարի աշխատուժը, մասնագիտությանը հատուկ հմտությունները յուրացնելուց բացի, պետք է նաև ունենա տեղեկատվության մշակման կարողություններ, այդ թվում՝ գրագիտություն, թվաբանության իմացություն, խնդիրներ լուծելու կարողություն և այլ «ընդհանուր» հմտություններ, ինչպիսիք են՝ միջանձնային հաղորդակցությունը, ինքնակառավարումը, սովորելու ունակությունը: Այս հմտություններն աշխատողներին կօգնեն դիմակայել արագ փոփոխվող աշխատաշուկայի անորոշություններին: ՏՀԶԿ-ն դասակարգում է երկու հասկացություններ՝ հմտություններ և կարողություններ: Եվրոպական հանձնաժողովը (European Commission's Cedefop glossary, 2008) հմտությունը սահմանում է որպես «գործողություններ կատարելու և խնդիրներ լուծելու կարողություն», մինչդեռ կարողությունը՝ «սովորածի արդյունքներն արդյունավետ կերպով կիրառելու կարողությունն է տրված համատեքստում (կրթություն, աշխատանք, անձնական կամ մասնագիտական զարգացում)»: «Կարողությունն ավելին է, քան գիտելիքը կամ հմտությունը: Այն ներառում է բարդ պահանջներ բավարարելու կարողություններ՝ որոշակի իրավիճակում օգտագործելով սոցիալ-հոգեբանական ռեսուրսներ (այդ թվում՝ հմտություններ և վերաբերմունք): Օրինակ՝ արդյունավետ հաղորդակցվելու

ունակությունը լեզվի ու SS գիտելիքների տիրապետման և վերաբերմունքի կոմպլեքսի հանդեպ» (Rychen and Salganik, 2003): ՏՀԶԿ-ն 21-րդ դարի հմտությունները և կարողությունները սահմանում է որպես «հմտություններ և ունակություններ, որոնք երիտասարդները պետք է ունենան 21-րդ դարի գիտելիքի հասարակությունում արդյունավետ աշխատողներ և քաղաքացիներ լինելու համար»: Այս սահմանումը դիտարկելով ճկուն է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հետազոտողների և քաղաքականություն մշակողների շրջանում ընդհանուր համաձայնություն չկա հմտությունների կոնկրետ համախմբի կամ դրանց սահմանումների վերաբերյալ: • Այնուամենայնիվ, ՏՀԶԿ 21-րդ դարի հմտությունների շրջանակն առանձնացնում է հմտությունների և կարողությունների երեք ուղղություն՝ տեղեկատվություն, հաղորդակցություն, էթիկա և սոցիալական ազդեցություն: • Տեղեկատվության ուղղությունը ներառում է երկու ենթաուղղություն՝ ա) տեղեկատվությունը որպես աղբյուր. տեղեկատվության որոնում, ընտրություն, գնահատում և կազմակերպում, բ) տեղեկատվությունը որպես արդյունք. տեղեկատվության վերափոխում ու մոդելավորում և սեփական մտքերի զարգացում (գիտելիք): • Հաղորդակցության ուղղությունը ներառում է՝ ա) արդյունավետ հաղորդակցություն, բ) համագործակցություն և վիրտուալ շփում: • Էթիկայի և սոցիալական ազդեցության ուղղությունը ներառում է՝ ա) սոցիալական պատասխանատվություն (անհատի գործողությունները կարող են հասարակության վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն ունենալ), բ) սոցիալական ազդեցություն, որը վերաբերում է թվային դարաշրջանի մարտահրավերների գիտակցության զարգացմանը: Հատկանշական է, որ վերոնշյալ հմտությունների հատուկ գնահատում չկա: Փոխարենը, ենթադրվում է, որ դրանք գնահատվում են տվյալ երկրում գործող ընդհանուր գնահատման քաղաքականությունների շրջանակում՝ տարբեր հանրակրթական ծրագրերի գնահատման նորմերով: Սա նաև պայմանավորված է այն փաստով, որ 21-րդ դարի հմտությունները հիմնականում չեն դասավանդվում որպես առանձին առարկաներ, այլ առկա են ողջ հանրակրթության ծրագրի մեջ: Ընդհանուր առմամբ, 21-րդ դարի հմտությունները գրեթե չեն տարբերվում 19-րդ և 20-րդ դարի հմտություններից: 21-րդ դարի հմտությունները սերտորեն կապված են տնտեսական աճի մոդելների հետ և ունեն ազգային առանձնահատկություններ: 21-

րդ դարի հիմնական նոր հմտությունը SՏՏ գրագիտությունն է: Եվրոպական առանցքային կարողություններ՝ շարունակական կրթության համար Շարունակական կրթության «Եվրոպական առանցքային կարողությունները» Եվրոպական խորհրդարանի կողմից ներկայացված առաջարկությունների հավելված է, որը հրապարակվել է ԵՄ պաշտոնական ամսագրում 2006թ. դեկտեմբերի 30-ին: Եվրոպական առանցքային կարողությունները սկզբունքային մակարդակում հիմնված են կրթության սոցիալական և տնտեսական դերի վրա: Կարողությունները սահմանվում են որպես «գիտելիքների, հմտությունների և վերաբերմունքի համախումբ՝ համապատասխան տրված համատեքստին: Առանցքային կարողությունների կարիքն ունեն բոլոր անհատները՝ անձնական զարգացման, ակտիվ քաղաքացիության, սոցիալական ընդգրկվածության և աշխատանքի համար»: Եվրոպական առանցքային կարողություններն ութ ուղղվածության են՝ ա) հաղորդակցում մայրենի լեզվով, բ) հաղորդակցում օտար լեզուներով, գ) մաթեմատիկական կարողություններ և գիտության ու տեխնոլոգիաների ոլորտում հիմնարար կարողություններ, դ) թվայնացված կարողություններ, ե) սովորելու կարողություն, զ) սոցիալական և քաղաքացիական կարողություններ, է) նախաձեռնողականություն և գործունյա վարք, ը) մշակութային ճանաչողություն և արտահայտում: Եվրոպական առանցքային կարողություններից յուրաքանչյուրն ունի պարզաբանում, թե այն ինչ գիտելիք, հմտություններ և կարողություն է ենթադրում: Սա դյուրացնում է կարողությունների փոխակերպումը կրթական և դասավանդման նպատակների: Այս տեսանկյունից Եվրոպական առանցքային կարողությունների մոտեցումն ավելի արդյունավետ է սահմանված, քան SՏԶԿ 21-րդ դարի հմտությունների մոտեցումը:

Ավագ դպրոցն ավարտելիս սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներն առկա են ուսումնասիրված բոլոր ծրագրերում, սակայն Ա, Բ, Գ մակարդակների բաժանումը ոչ բոլորում է ամբողջական: Օրինակ՝ «Կենսաբանություն» առարկայի դեպքում մակարդակների բաժանումը տրված է միայն ընդհանուր հոսքի համար:

«Կենսաբանություն» առարկան ուսումնական գործունեության ընդհանրական կամ թեմատիկ նկարագրություն չի պարունակում, սակայն ունի ցուցադրումների և

լաբորատոր աշխատանքների բաղադրիչ, որոնք նույնպես ուսումնական գործունեության տեսակներ են:

«Կենսաբանություն» առարկան «Բնություն, բնական գիտություններ» ուսումնական բնագավառը ներկայացնող պարտադիր առարկա է, որը 2-4-րդ դասարաններում, այլ բնագիտական և հասարակագիտական առարկաների հետ, ինտեգրված է «Ես և շրջակա աշխարհը» առարկայի մեջ, 5-6-րդ դասարաններում՝ «Բնագիտություն» առարկայի մեջ, իսկ հիմնական դպրոցի 7-9-րդ դասարաններում և ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում դասավանդվում է որպես առանձին առարկա: Ավագ դպրոցում իրականացվում է հոսքային ուսուցում՝ ընդհանուր և հումանիտար ու բնագիտամաթեմատիկական հոսքերում¹⁰: Ամբողջականություն և սահունություն Ուսումնական նպատակներ «Կենսաբանություն» առարկայի (այս բաժնում այսուհետ՝ կենսաբանություն կամ առարկա) վերաբերյալ նախնական պատկերացումներ տրվում են տարրական դպրոցում՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի շրջանակներում, որին հաջորդում է «Բնագիտություն» առարկան միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում: Միջին դպրոցի 7- րդ դասարանից «Կենսաբանություն» առարկան առանձնացվում է բնագիտական մյուս առարկաներից և դասավանդվում որպես առանձին առարկա: Ընդհանուր առմամբ՝ առարկայական ծրագրի մշակման հիմքում դրված է աստիճանական բարդացման սկզբունքը: «Կենսաբանություն» առարկայի ուսումնական նպատակները միջին դպրոցի համար ներառված են հայեցակարգում, իսկ ավագ դպրոցի ուսումնական նպատակները ծավալուն են և խմբավորման ու դասակարգման կարիք ունեն: Ուսումնական նպատակները հիմնական և ավագ դպրոցների առարկայական չափորոշիչներում միևնույն մոտեցմամբ սահմանված չեն: Մի դեպքում դրանք սահմանվում են որպես կարողություններ, որոնք սովորողը պետք է ձևավորի և զարգացնի ուսումնառության ընթացքում, ինչպես օրինակ՝ «պլանավորել և իրականացնել փորձեր, գրանցել դիտարկումները, դրանք համակարգել աղյուսակների, գրաֆիկների, գծապատկերների տեսքով, մեկնաբանել ստացված արդյունքները», իսկ մյուս դեպքում առարկայի ուսումնական նպատակները ձևակերպված են որպես հիմնախնդիրներ, որոնց հաղթահարմանը պետք է ուղղված լինեն կենսաբանության բովանդակությունը և դասավանդումը, օրինակ՝ «պատասխանատվություն բնության,

հասարակության, սեփական անձի նկատմամբ, կատարած արարքների համար», «դաստիարակել կենսաբանական և էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, որը գիտակցի կյանքի՝ որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը»:

Բովանդակային առումով առարկայական նպատակները կարելի է բաժանել գիտելիքների և հմտությունների չորս խմբի, որոնք ուղղված են՝ - բնապահպանությանը, - կենդանի օրգանիզմների կառուցվածքին, գործառույթներին, միմյանց և անկենդան բնության հետ փոխհարաբերություններին, դրանց գիտական ճանաչողության մեթոդներին, - առողջ ապրելակերպի ձևավորմանը, - խմբում աշխատելու և համագործակցելու կարողությունների ձևավորմանը: Տարրական դպրոց և միջին դպրոցի 5-6-րդ դասարաններ: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, տարրական դպրոցում նպատակ է դրվում սովորեցնել ճանաչել սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին, ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ և զարգացնել բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում: Բնագիտության դասընթացում առողջ կենսակերպի ձևավորման և հիգիենայի կանոնների իմացությանն ու կիրառմանն ուղղված նպատակներ չեն դրվում: Փոխարենը դասընթացը կենտրոնանում է սովորողներին բարձր դասարաններում կենսաբանության ավելի խոր ուսումնասիրությանը նախապատրաստելուն՝ նպատակ ունենալով՝ - սովորողների մեջ ձևավորել գիտական պատկերացումներ բնության միասնականության, երևույթների, նրանց փոխադարձ կապերի և բնության ամբողջականության մասին, - ծանոթացնել բնության ուսումնասիրման մեթոդներին և միջոցներին, - սովորողների մեջ ձևավորել բնության պարզագույն երևույթները բացատրելու կարողություններ, սովորողներին տալ տարրական բնապահպանական գիտելիքներ: - Խմբում աշխատելու գիտելիքների և հմտությունների տեսանկյունից ներկայացված նպատակները շարունակական չեն. առկա են տարրական դպրոցում, որտեղ նպատակ է դրված՝ - սովորեցնել արդյունավետ հաղորդակցվել և համագործակցել ուրիշ մարդկանց հետ, նպաստել սեփական արժանապատվության զգացումի, ...շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը, ...սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն:

Տարրական և միջին դպրոցներում այս նպատակները կրկնվում են՝ առանց զարգացման, իսկ ավագ դպրոցում ընդհանրապես բացակայում են: Միջին դպրոց՝ 7-9-րդ դասարաններ: Կենսաբանության 7-9-րդ դասարանների առարկայական ուսուցման նպատակներն ավելի ընդգրկուն են: Առողջ ապրելակերպի ձևավորման առումով առարկայական նպատակները զարգացում են ապրում՝ ընդգրկելով նաև սովորողների հոգեկան առողջությունը: Անհասկանալի է, սակայն, առարկաների նպատակներում առկա «բարոյական առողջություն» արտահայտությունը և դրա կապը կենսաբանությունն առարկայի հետ: Նաև նպատակ է դրվում սովորողների մոտ զարգացնել առողջ ապրելակերպի նորմերը, օրվա ռեժիմը և սննդի հիգիենան պահպանելու, սեփական առողջության մասին հոգ տանելու հմտություններ: Միջին դպրոցի կենսաբանության ծրագրի նպատակներում առանձնահատուկ խորացում է ապրում բնության և կենդանի օրգանիզմների մասին սովորողների գիտելիքների ձեռք բերման, բնության այս կամ այն երևույթի մասին կարծիք հայտնելու, կարծիքը փաստերով հիմնավորելու կարողության ձևավորումը: Դրան զուգահեռ՝ նպատակ է դրվում սովորողների մոտ զարգացնել բնության մեջ և լաբորատոր պայմաններում դիտարկելու, նկարագրելու, համեմատելու, բնական օբյեկտները համադրելու և եզրահանգումներ կատարելու, փորձեր պլանավորելու և իրականացնելու, դիտարկումները գրանցելու, դրանք աղյուսակների, գրաֆիկների, գծապատկերների տեսքով համակարգելու, ստացված արդյունքները մեկնաբանելու կարողությունները: Հատկանշական է, որ միջին դպրոցի համար նպատակ է դրվում 7-9 դասարանցիների մեջ ձևավորել բնագիտական ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ գիտահանրամատչելի գրականությունից, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն, ինչն ընդգրկված չէ նախորդ դասարանների համապատասխան առարկայական նպատակներում: Բնապահպանական կրթության առումով առարկայի նպատակն է խորացնել նախորդ տարիներին տրված տարրական բնապահպանական գիտելիքները և դաստիարակել կենսաբանական ու էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձ, որը գիտակցի կյանքի՝ որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի նշանակությունը և կարողանա բնության հետ իր հարաբերությունները կառուցել կյանքի, մարդու և շրջակա միջավայրի նկատմամբ հարգանքի հիման վրա: Ավագ դպրոց: Ավագ դպրոցի առարկայական նպատակներն

առողջ ապրելակերպի առումով սովորողից ակնկալում են ունենալ պատասխանատու վերաբերմունք սեփական առողջության նկատմամբ, սանիտարահիգիենիկ նորմերը և առողջ ապրելակերպի կանոնները պահպանելու, հիվանդությունները և վնասվածքները կանխարգելելու, վնասակար սովորություններից խուսափելու կարողություններ: Դրանք կրկնում են միջին դպրոցում դրված նպատակները՝ առանց որևէ էական տարբերության: Եթե գիտելիքային բազայի խորության առումով նպատակները հիմնական դպրոցի համեմատ զարգացում և որոշակի ուղղվածություն են ստանում, ապա գիտական ճանաչողության մեթոդների, հետազոտական աշխատանքի առումով առարկայական նպատակները միջին դպրոցի համեմատությամբ թեթևանում են:

Միջին դպրոցի սովորողից ակնկալվող «պլանավորելն» առավել բարձր կոգնիտիվ գործընթաց է, քան ավագ դպրոցում ներկայացվող պահանջները: Մյուս կողմից, եթե 7-9-րդ դասարաններում նպատակ էր դրված աշակերտների մեջ զարգացնել բնագիտական ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ գիտահանրամատչելի գրականությունից, տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություն, ապա ավագ դպրոցում այդ պահանջը ձևակերպված է որպես «օգտվել համակարգչային տեխնոլոգիաներից»՝ առանց նշելու, թե SՏՏ-ի հետ կապված հատկապես ինչպիսի կարողություններ և հմտություններ պետք է զարգացնել: Բնապահպանության բաղադրիչում նույնպես միջին դպրոցի համեմատությամբ ընդհանուր առմամբ փոփոխություններ առկա չեն: Ավագ դպրոցում նպատակ է դրվում զարգացնել սովորողների էկոլոգիական ընդհանուր գրագիտությունը և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն ցուցաբերելու կարողությունը, սովորողներից ակնկալվում է հասկանալ կիրառվող տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և գիտակցել բնությունը պահպանելու անհրաժեշտությունը: Ավելին, եթե միջին դպրոցում սովորողը պետք է «գնահատի մարդկային գործունեության ազդեցությունը բնության վրա», ինչն ավելի բարդ կոգնիտիվ գործընթաց է, ապա ավագ դպրոցում սովորողն ընդամենը պետք է «հասկանա կիրառվող տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և գիտակցի բնությունը պահպանելու անհրաժեշտությունը»:

Ընդհանուր առմամբ՝ տարրական և միջին դպրոցի 5-6-րդ դասարաններում ինտեգրված առարկաներում կենսաբանություն առարկային հատուկ ուսումնական նպատակների դիմամիկ զարգացումն ընդհատվում է 7-9-րդ դասարաններում, որտեղ սովորողներին ներկայացվող պահանջները թռիչքաձև աճ են ապրում. պահանջվող կոգնիտիվ գործընթացները, կարողությունները և հմտությունները չեն զիջում և երբեմն նույնիսկ գերազանցում են ավագ դպրոցի առարկայի ուսումնական նպատակները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի՝ 1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն. 2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ. 3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից. 4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների. 5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը. 6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը. 7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի. 8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները. 9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից: Սովորողը պարտավոր է՝ 1) կատարել ուսումնական

հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները. 2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները. 3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին. 4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կրթության իրավունքի հասանելիության և հավասարության հիմնախնդիրները ՀՀ հանրակրթության ոլորտում, Հետազոտության նախնական արդյունքներ Երևան, 2017:
2. Леднев В.С., Содержание образования. М., 1989:
3. Экштайн, Основные права и свободы. По российской Конституции и Европейской Конвенции. М., 2004: